ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանի՝ Վրաստան (Թբիլիսի) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Կարեն Անդրեասյան և Արփինե Սարգսյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնները՝ ՀՀ արդարադատության նախարար և ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Վրաստան (Թբիլիսի), 2022թ. մայիսի 1-ից 3-ը:

Հրավիրող կողմը՝ Վրաստանի արդարադատության նախարար:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Հայ-վրացական իրավական համագործակցության չորրորդ ֆորումին:

Քննարկված թեմաները՝ նոտարական ծառայությունների հասանելիությանը, արբիտրաժին, դատական ակտերի հարկադիր կատարմանը, էլեկտրոնային հանրային ծառայությունների մատուցմանը, քրեակատարողական և պրոբացիոն համակարգերի բարեփոխումներին, դատապարտյալների վերասոցիալականացման ծրագրերին, ֆորմալ և ոչ ֆորմալ իրավաբանական կրթությանն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

2022թ. հունվարին Վրաստանի արդարադատության նախարարի Հայաստանի Հանրապետություն կատարած այցի ընթացքում ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի և Վրաստանի արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեի միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն սույն թվականի մայիսի 2-ից 3-ը կայացած Հայ-վրացական իրավական համագործակցության չորրորդ ֆորումին մասնակցելու նպատակով ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը և ՀՀ

արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը 2022թ. մայիսի 1-ից 3-ը գտնվել են Վրաստանում (Թբիլիսի):

Այցի շրջանակներում 2022թ. մայիսի 2-ին ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը հանդիպել է Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլիին: Հանդիպման ընթացքում բարձր է գնահատվել Հայաստանի և Վրաստանի արդարադատության նախարարների միջև սույն թվականի հունվարին ստորագրված համագործակցության հուշագիրը: Նախարար Անդրեասյանը Վրաստանի վարչապետին ներկայացրել է հարկադիր կատարման ծառայության, արբիտրաժային կենտրոնի, արդարադատության տների և պրոբացիայի ոլորտներում երկու երկրների միջև ձեռքբերված համագործակցության և փորձի փոխանակման վերաբերյալ պայմանավորվածությունը, ինչպես նաև արդարադատության ոլորտին առնչվող այլ հարցեր:

Վրաստանի վարչապետը կարևորել է երկու երկրների արդարադատության նախարարների պայմանավորվածությունը՝ ամրապնդել արդարադատության, մարդու իրավունքների և հանրային ծառայությունների մատուցման ոլորտում համագործակցությունը: Ընդգծվել է տարածաշրջանում խաղաղության ու կայունության պահպանման և առկա մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ համատեղ աշխատանքի կարևորությունը:

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի և Վրաստանի վարչապետի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է նաև Վրաստանի վարչապետի «Հարավային Կովկասում խաղաղ հարևանության» նախաձեռնությունը: Այս համատեքստում հաստատվել է վրացական կողմի պատրաստակամությունը՝ նպաստելու տարածաշրջանում խաղաղության ամրապնդմանը:

ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանը մասնակցել է նաև Հայ-վրացական իրավական համագործակցության չորրորդ ֆորումին և Վրաստանի արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեի հետ միասին հանդես եկել բացման և փակման խոսքերով: Ֆորումի ժամանակ երկու երկրների նախարարները ընդգծել են արդեն իսկ «ավանդույթ» դարձած իրավական ֆորումների պարբերական անցկացման կարևորությունը, որոնք դեռևս 2015 թվականից ձեռք

բերված պայմանավորվածության համաձայն՝ փոխադարձության սկզբունքով տեղի են ունենում Երևանում և Թբիլիսիում:

Նախարար Կարեն Անդրեասյանը իր ելույթում շեշտել է. «Լիահույս եմ, որ այն կնպաստի ՀՀ արդարադատության և Վրաստանի արդարադատության նախարարությունների միջև առկա գործընկերային, արդյունավետ և բարեկամական հարաբերությունների ամրապնդմանը, երկու գերատեսչությունների իրավասություններին առնչվող ոլորտներում առկա լավագույն փորձի փոխանակմանը, ինչպես նաև երկու պետությունների արդարադատության նախարարությունների աշխատակիցների միջև փոխադարձ այցերի միջոցով համագործակցության ընդլայնմանը և խորացմանը:

Մեզ համար շատ կարևոր է երկու բարեկամ երկրների միջև փորձի փոխանակումը՝ մասնավորապես «Probbox»-ի փայլուն գաղափարը, որը նպաստում է պրոբացիոն համակարգի զարգացմանը, ինչպես նաև արդարադատության տները, որը նույնպես հանդիսանում է շատ կարևոր մի փորձ»: Կարեն Անդրեասյանը կարևոր է համարել նաև արբիտրաժային կենտրոններ ստեղծելու գաղափարը, որն այս պահին Հայաստանում գտնվում է ստեղծման սկզբնական փուլում, իսկ Վրաստանում այն արդեն իրագործվել է:

Վրաստանի արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն ընդգծել է, որ Վրաստանի և Հայաստանի գործընկերային հարաբերությունները կտեղափոխվեն նոր փուլ, և երկու երկրների արդարադատության նախարարությունների միջև համագործակցությունն էլ ավելի կամրապնդվի:

Հայ-վրացական իրավական համագործակցության չորրորդ ֆորումի շրջանակում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը ներկայացրել է ՀՀ-ում ընթացքի մեջ գտնվող ոստիկանության, քրեակատարողական և պրոբացիոն ոլորտների բարեփոխումները, նշված ոլորտներում զարգացման ծրագրերի մշակման և իրականացման, ինչպես նաև ազատությունից զրկման վայրերում ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքների պաշտպանության ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Հաշվի առնելով այն հանգմանաքը, որ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանի անմիջական համակարգման ներքո է գտնվում պրոբացիոն ծառայությունը՝ վերջինս մանրամասն ուսումնասիրել է Վրաստանի հանցագործության կանխարգելման, ազատազրկման հետ չկապված պատիժների կատարման և Պրոբացիայի ազգային գործակալության կողմից ստեղծված և 2021 թվականի դեկտեմբերի 22-ից պիլոտային ծրագրով կիրառվող «Probbox» էլեկտրոնային համակարգը: Այս համատեքստում անհրաժեշտ է նաև նշել, որ Արփինե Սարգսյանը իր վրացի գործընկերների հետ քննարկել է նաև «Probbox» էլեկտրոնային համակարգը Հայաստանում տեղայնացնելու հնարավորությանն առնչվող հարցեր:

Հայ-վրացական չորրորդ ֆորումի օրակարգում ընդգրկված էին արբիտրաժի, ակտերի հարկադիր կատարման, նոտարական ծառայությունների հասանելիության, էլեկտրոնային հանրային ծառայությունների մատուցման, քրեակատարողական և պրոբացիոն համակարգերի բարեփոխման, դատապարտյալների վերասոցիալականացման ծրագրերի, ֆորմալ և ոչ ֆորմալ իրավաբանական կրթության թեմաները, որոնց վերաբերյալ կողմերը փոխանակվել են գաղափարներով և կիսվել իրենց փորձով: Ֆորումի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարը և արդարադատության նախարարի տեղակալը այցելել են նաև Վրաստանի Ազգային արխիվ, Արդարադատության տուն, Քրեակատարողական ծառայություն և ծանոթացել նրանց աշխատանքներին:

ՀՀ արդարադատության նախարար

X _____

Կարեն Անդրեասյան

04.05.2022թ.